

**Գագիկ Ղազինյան**  
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,**  
**իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,**  
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**

**ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**  
**ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ «ԶԱՐԴԻ» ՆԻՅԻԼԻՍՏԱԿԱՆ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
**(1920-1922 թթ.)**

Հայաստանի առաջին հանրապետության գոյության ժանր պայմաններում ձևավորված հանրապետական կարգերը, պառլամենտարիզմը, իրավական օրենսդրական կարգավորման փորձերը, իրենց հակասականությամբ հանդերձ մի շարք այլ պատճառների ուժով չհայրեցին բնական պատմական զարգացում: Երկրում հաստատվեց խորհրդային իշխանություն: Հայաստանում սոցիալիստական հեղափոխության իրականացման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման առանձնահատկություններից մեկն այն էր, որ այստեղ այդ գործընթացներն ունեցան խաղաղ ընթացք: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Առաջին հանրապետության կառավարությունն իշխանությունը կամավոր հանձնեց մեծամասնականներին:<sup>1</sup> Սակայն այդ հանգամանքը ևս չխանգարեց հայ մեծամասնականներին կենսագործել «հին պետաիրավական կառուցակարգը ջարդի» ենթարկելու քաղաքական իրավական դոկտրինան, որը ծայրահեղ իրավական նիհիլիզմի դրսևորում էր: Հետևելով սոցիալիստական պետության կառուցման օրինաչափություններին՝ «ջարդի» ենթարկվեց նաև առաջին հանրապետության դատական համակարգը:

Պատմական այս փաստը հայագիտության մեջ տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել: Խորհրդահայ իրավագիտությունն այն ներկայացնում էր ձևական-իրավական տեսանկյունից, զուտ որպես դոկտրինալ փոփոխություն, որը հանգեցրեց իրավական հիմքերի՝ օրենսդրության փոփոխությունների: Այդ պատմագիտությունն իր

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 2: Այս պատմական փաստը կոծկելով հայ մեծամասնականները հետագայում հորինեցին Հայաստանի գյուղացիության և բանվորության ապստամբության հետևանքով իրականացված խորհրդայնացման վարկածը, ինչը ինչը պատմության դասական կեղծարարության օրինակ էր:

զարգացման յուճանատուն տարիների ընթացքում կոծկում էր մարդկանց ճակատագրերի վրա իրավական միհիլիզմի ազդեցության իրական հետևանքները: Դրան հակառակ հայագիտության սփյուռքահայ հատվածն անկախ լինելով քաղաքական-գաղափարական կապանքներից տեղի ունեցած իրավական գործընթացները ներկայացնում էր ավելի անկողմնակալ: Փորձենք խորհրդային իշխանության հաստատման գործընթացի իրավական կողմերի բացահայտման միջոցով վեր հանել իրական պատկերը, իրավական համակարգի հեղափոխական «ջարդի» սոցիալական հետևանքները:

Հայիեղկունը իր 1920 թ. դեկտեմբերի 12-ի դեկրետով հիմնադրեց Հայաստանի ՍԽՀ արդարադատության ժողկոմատը<sup>1</sup>: Արդեն դեկտեմբերի 18-ին արդարադատության ժողկոմատը հրապարակեց «Հին դատարանների լուծարման մասին» հրամանը, որում սահմանվում էր. «Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության տարածքում գոյություն ունեցող բոլոր դատական մարմինները համարել վերացված: Բոլոր դատական պաշտոնատար անձանց, բացի քննիչներից և գրասենյակային աշխատողներից, դեկտեմբերի 15-ից համարել արձակված: Բոլոր դատական գործերը հանձնել ժողովրդական դատարաններին և ռազմական տրիբունալին՝ ըստ ընդդատության»<sup>2</sup>:

Հայիեղկունի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով Հայաստանի տարածքում չգործող հայտարարվեց առաջին հանրապետության օրենսդրությունը, այդ թվում և դատական կանոնադրությունները: Այդ նույն դեկրետով վերացված օրենսդրության փոխարեն գործող համարվեց ՌԽՖՍՀ օրենսդրությունը, այն փոփոխություններով և լրացումներով, որոնք անհրաժեշտ կհամարեր հեղափոխական կառավարությունը՝ ելնելով հանրապետության առանձնահատկություններից<sup>3</sup>:

1920 թ. դեկտեմբերին արդարադատության ժողկոմատը հրա-

---

<sup>1</sup> Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո և մինչև 1937 թ. Սահմանադրության ընդունումը հանրապետությունը անվանվում էր երկակիորեն «Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետություն» և «խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն Հայաստան»: Այս երկակիությունը վերացվեց 1937 թ. Սահմանադրությամբ, որով այն կոչվեց Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

<sup>2</sup> Տես ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 30:

<sup>3</sup> Տես նույն տեղը, հոդվ. 39:

պարակեց «ժողովրդական դատարանների մասին» հրամանը<sup>1</sup>: Այդ հրամանով ստեղծվող ժողովրդական դատարանները համարվում էին հեղափոխական օրինականության և աշխատավորների նվաճումների պահպանության մարմիններ: 1921 թ. հունվարի 15-ին Յայ-հեղկոմը ընդունեց դեկրետ «Գերագույն տրիբունալի և հեղափոխական տրիբունալների մասին»<sup>2</sup>, որը հիմնականում կարգավորում էր դատարանակազմության հարաբերությունները, սակայն պարունակում էր նաև որոշ դատավարական նորմեր: Գերագույն տրիբունալը վճռաբեկ ատյան էր տեղական հեղափոխական տրիբունալների համար և պարտավոր էր վճռաբեկ գանգատները քննարկել երեք օրվա ընթացքում: Սակայն գերագույն տրիբունալը Յայիեղկոմի և արդժողկոմատի առաջարկությամբ կարող էր քրեական գործերը քննել որպես առաջին ատյան: Գերագույն հեղափոխական տրիբունալի դատավճիռները վերջնական էին և 48 ժամվա ընթացքում պետք է ի կատար ածվեին, բացառությամբ մահապատիժ սահմանածների, որոնց կատարումը պահանջում էր Յայիեղկոմի հաստատումը: Յայաստանի ՍԽՂ ժողկոմխորհը 1921 թ. մայիսի 27-ին ընդունեց Տրիբունալների կանոնադրությունը: Ըստ այդ կանոնադրության՝ տրիբունալները քննում էին հայրենիքի դավաճանության, հակահեղափոխական բնույթի հանցագործությունների, կաշառակերության, խոշոր սպեկուլյացիայի և այլ հանցագործությունների վերաբերյալ գործերը<sup>3</sup>: Այդ կանոնադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարությունը տրիբունալներում իր ընդհանուր գծերով նման էր ժողովրդական դատարանների համար սահմանված կանոններին, որոշ բացառություններով, որոնք և տրիբունալներին դարձնում էին հակաիրավական, հակաժողովրդավարական բնույթի մարմիններ, քաղաքական պայքարի գործիք: Տրիբունալային դատավարությունում կողմերի (հատկապես ամբաստանյալի) իրավունքների շրջանակը սահմանափակված էր, իսկ դատական կազմն օժտված էր ավելի լայն իրավունքներով, քան ժողովրդական դատարանում: Տրիբունալային դատավարությունում բացակայում էին որոշ դատավարական երաշխիքներ և ձևեր: Օրինակ, տրիբունալը վկաներին կանչում էր իր հայեցողությամբ, իսկ կանչված վկաներին կարող էր չհարցաքննել կամ դադարեցնել հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ գտներ: Տրիբունալը կարող էր դադարեցնել դատական քննությունը, եթե

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, հոդվ. 43:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, հոդվ. 96:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թթ. 3-9:

գտներ, որ գործի հանգամանքները իրեն պարզ են: Տրիբունալը կարող էր մեղադրողին և պաշտպանին չթույլատրել մասնակցելու գործին, ինչպես նաև արգելել կողմերի վիճաբանությունը: Ըստ տրիբունալների կանոնադրության՝ ռեպրեսիայի որոշման հարցերում հեղափոխական տրիբունալներն օժտված էին անսահմանափակ իրավունքներով, այսինքն սահմանված էր պատժի ազատ ընտրության սկզբունքը:

Մյուս արտակարգ մարմինը՝ արտակարգ հանձնաժողովը, «չեկան» էր: 1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայհեղկոմը, օգտագործելով Ռուսաստանի փորձը, ընդունեց «Արտակարգ հանձնաժողովի հիմնադրման մասին» դեկրետը<sup>1</sup>: Արտակարգ հանձնաժողովի հիմնական խնդիրը պայքարն էր հակահեղափոխության, սպեկուլյացիայի և պաշտոնեական հանցագործությունների դեմ: Չեկայի հատուկ բաժինը պետք է զբաղվեր Կարմիր բանակում հակահեղափոխական հանցագործությունների դեմ պայքարով: Սակայն, ի տարբերություն ՌԽՖՍՀ-ի, Հայաստանի ՄԽՉ չեկան կատարում էր միայն նախաքննության գործառույթ: Նրա քննած գործերն ընդդատյա էին հեղափոխական տրիբունալներին: Արտակարգ հանձնաժողովն իրավունք ուներ կիրառելու վարչական հարկադրանք:

Պրոլետարիատի դիկտատուրայի ռեպրեսիվ ապարատի ստեղծումից հետո այն անմիջապես գործի անցավ: Ըստ ականատեսների վկայության սկսվեցին ձերբակալություններ, որոնք ուղղված էին հիմնականում Առաջին հանրապետության պետական-քաղաքական գործիչների դեմ: «Իրար ետևից բանտարկվեցին նախկին վարչապետ Դ. Օհանջանյանը, նախկին նախարար Ռ. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), խորհրդարանի անդամներ բժ. Դ. Տեր-Դավթյանը, Վահ. Նավասարդյանը, Վ. Բաբայանը, Գ. Վարշամյանը, Երևանի քաղաքային խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, սոցիալ-դեմոկրատ Բ. Իշխանյանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ: Այնուհետև բանտնետվեցին խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, առողջապահության և գյուղատնտեսության նախարարների օգնականներ բժ. Տեր-Միքայելյանը և Թ. Տոշյանը, խորհրդարանի անդամ բժ. Ղազարյանը և ուրիշներ... Երկրի բոլոր կողմերում խուզարկություններ և անվերջ ձերբակալություններ էին տեղի ունենում: Հայաստանի բանտերը բերնբերան լցվեցին կալանավորներով: Բացի վերոհիշյալներից՝ բանտարկվեցին Լևոն Շանթը, Հով. Քաջագունին, Նիկոլ Աղ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՄԽՉ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 5:

բալյանը, Երևանի քաղաքագլուխ Ս. Մուսինյանը և ուրիշ հարյուրավորներ: Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, գնդակահարության մշտական սպառնալիքի տակ»<sup>1</sup>:

Անհիմն հարկադրանքի երկրորդ խոշոր ալիքն ուղղվեց հայ զինվորականների դեմ: Ըստ Ս. Վրացյանի տվյալների 1920 թ. դեկտեմբերի վերջերին հաշվառման վերցվեցին «հայկական բանակի բոլոր սպաները և 70 ընտիր զինվորականներ անմիջապես արտրվեցին Բաքու:

Յունվարի 10-ին Ռուսաստան արտրվեց Դրոն իր զինակից սպաների հետ:

Յունվարի 24-ին Ռուսաստան արտրվեցին և Յայաստանի բանակի մնացած սպաները, 1200 հոգի, որոնց մեջ էին և սպարապետ Նազարբեգյանը, զորավարներ Սիլիկյանը, Յախվերդյանը, Ղամազյանը: Չմռան անասելի ցրտին ու ձյունին, շրջապատված ռուսական հրացանավոր և գնդացրավոր պահակներով, հետիոտն, ժողովրդի ընդհանուր սուգի մեջ, հայկական բանակի զինվորականները քշվեցին անծանոթ ուղղությամբ»<sup>2</sup>:

1921 թ. ապրիլի 15-ին հակամեծամասնական զինված ապստամբության պարտությունից հետո, Յայիեղկոմը և արդարադատության ժողկոմատը համատեղ դեկրետով արտակարգ հանձնաժողովին օժտեցին ոչ միայն լրտեսության, հակահեղափոխական և պաշտոնեական հանցագործությունների, երկաթուղային հաղորդակցության և կապի միջոցների վերացման, զենք զինամթերք և պայթուցիկ նյութեր պահելու վերաբերյալ գործերի նախաքննության կատարման իրավունքով, այլև այդ գործերի լուծման իրավունքով: Այդ պահից արտակարգ հանձնաժողովը վերածվեց դատական ատյանի:

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում Յայաստանի ՍԽՅունում դատական համակարգը կազմված էր երեք ենթահամակարգերից՝ ժողովրդական դատարաններ, հեղափոխական տրիբունալներ, արտակարգ հանձնաժողով: Օրենսդրությամբ սահմանվում էր յուրաքանչյուր ենթահամակարգի կառուցվածքը, լիազորությունների շրջանակը, իսկ այդ մարմինների դատավարական գործունեություն-

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ս. Յայաստանի Յանրապետություն, Եր., Յայաստան, 1993, էջ 543:

<sup>2</sup> Տե՛ս Վրացյան Ս. Յայաստանի Յանրապետություն, Եր., Յայաստան, 1993, էջ 543:

նը, եզակի բացառություններով հանդերձ, ընդհանրապես չէր կարգավորված:

Հայաստանի ՍԽՅ արդժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով քրեական գործերի քննությունը պետք է վարեին դատարանի աշխատակիցները, իսկ քննության ղեկավարման համար ստեղծվում էին քննչական հանձնաժողովներ<sup>1</sup>: Այդ հանձնաժողովների գործունեությունը կառուցված էր կոլեգիալության սկզբունքով: Քննչական հանձնաժողովները քննում էին ամենաբարդ և կարևոր գործերը, ինչպես նաև հսկում էին հետաքննության մարմինների գործունեությունը: Հրամանով սահմանված էր, որ արդարադատության մարմիններն իրենց գործունեության մեջ պետք է ղեկավարվեին խորհրդային իշխանության օրենքներով, հեղափոխական խղճով և սոցիալիստական իրավագիտակցությամբ: Արդարադատության ժողկոմատի 1921 թ. փետրվարի 9-ի որոշմամբ քննչական հանձնաժողովների փոխարեն ստեղծվեց ժողովրդական քննիչների ինստիտուտը: Նույն թվականի ապրիլի 9-ին արդարադատության ժողկոմատին կից հիմնադրվեց քննչական բաժին, որը ղեկավարում էր նախաքննության մարմինների աշխատանքը, իսկ ապրիլի 19-ին արդժողկոմատը հաստատեց հրահանգ, որը նախաքննության կատարումը կարգավորող առաջին նորմատիվ ակտն էր: Այդ հրահանգը սահմանում էր քրեական գործ հարուցելու հիմքերը և նախաքննության վարման կարգը, ժողովրդական քննիչի իրավունքները և պարտականությունները, քննչական գործողությունների շրջանակը և կատարման կարգը: Նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացնում էր ժողովրդական դատարանը:

Արդժողկոմատի 1921 թ. հունվարի 4-ի հրամանով ստեղծվեց դատական պաշտպանների կոլեգիան, սակայն ձևավորված քաղաքական իրադրության մեջ այն իրեն չարդարացրեց և վերացվեց: Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 9-ի «Մեղադրանքի և պաշտպանության կազմակերպման մասին» ղեկրետով արդժողկոմատի տեղական մարմիններին կից ստեղծվեցին մեղադրողների և պաշտպանների կոլեգիաներ: Կոլեգիաների անդամներն ունեին պետական ծառայողի կարգավիճակ և նշանակվում էին արդժողկոմխորհի կողմից<sup>2</sup>: Սակայն այս քայլը ևս չնպաստեց պաշտպանների լայն մաս-

<sup>1</sup> Տե՛ս ՀՍԽՅ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 30, 31:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՅ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 3, հոդվ. 78:

նակցությանը քրեական դատավարությանը<sup>1</sup>:

Մինչև 1921 թ. փետրվարյան ապստամբությունը հայ բոլշևիկների իրականացրած ռազմական կոմունիզմի քաղաքականությունը վերածվեց կամայականության: Բացի զանգվածային ապօրինի խուզարկություններից ու ձերբակալություններից «Երևանում և ամբողջ երկրում կատարվում էին անկանոն և անհաշիվ բռնագրավումներ: Գրավում էին ամեն ինչ՝ բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչև իսկ թել ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնություն, այժմ իրենից էր խլվում հացի վերջին պատառը և ուղարկվում Ռուսաստան: Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նվեր էր ուղարկվում պետական պահեստների և ժողովրդի բռնագրավված պաշարը՝ սպիտակ ալյուր, խտացված կաթ, կակաո, շաքար, կոշիկի կաշի, հագուստեղեն և այլն»<sup>2</sup>:

Հակամեծամասնական ապստամբության (1921 թ. փետրվար-ապրիլ) պարտությունից հետո պարզվեց, որ զինված ապստամբության պատճառներից մեկն էլ այն ապօրինությունները, ամենաթողությունն ու բռնություններն էին, որ իրականացնում էին նոր իշխանությունները ռազմական կոմունիզմի քաղաքականության համատեքստում: Այդ պահից Հայաստանում նկատվում է քրեադատավարական հարաբերությունների իրավական կարգավորման միտում, որի նպատակն էր այդ ոլորտում խստագույն կարգի ու օրինականության հաստատումը, քաղաքացիների նկատմամբ չհիմնավորված դատավարական հարկադրանքի կիրառման բացառումը: Սակայն այդ կարգավորումը չունեց ամբողջական, համակարգային բնույթ, այլ ձևավորվում էր աստիճանաբար, քրեական դատավարության առանձին ինստիտուտների քայլ առ քայլ հաստատման միջոցով: Ռազմափեղափոխական կոմիտեի 1921 թ. ապրիլի 3-ի հրամանով բոլոր անհիմն խուզարկությունները համարվեցին հեղափոխական կարգուկանոնի խախտումներ և պատժվելու էին օրենքի ամբողջ խստությամբ<sup>3</sup>: Ժողկոմիտեի 1921 թ. հունիսի 3-ի «խուզարկության, առգրավման և կալանավորման կանոնների մասին» հրամանով թվարկ-

<sup>1</sup> Տե՛ս Պիվազյան Հ.Մ., Ղատարանի կազմակերպումը և զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1966, էջ 11-12, 39-40:

<sup>2</sup> Տե՛ս Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 543-544:

<sup>3</sup> Տե՛ս ՀՍԽ՝ ղեկերտների և հրամանների ժողովածու, 1921, պ. 2, հոդվ. 1:

վում էին այն մարմինները, որոնք իրավագոր էին իրականացնել նշված գործողությունները: Նույն դեկրետով ամեն տեսակի կալանքները, խուզարկությունները և առգրավումները կարող էին կատարվել միայն արդարադատության ժողկոմատի դատաքննչական մարմինների կողմից, իսկ հակահեղափոխական և որոշ՝ առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ հատուկ օրդերի հիման վրա, որ տրվում էր Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի հատուկ բաժնի և քաղբյուրոյի հատուկ որոշմամբ: Միլիցիայի մարմինները մինչև սանկցիա ստանալն իրավունք ունեին ձերբակալվածներին պահել մինչև 4 ժամ, իսկ քրեական հետախուզության մարմինները՝ 7 օր, որից հետո, եթե սանկցիա չէր տրվում, ձերբակալվածներին պետք է ազատ արձակելին: Ի կատարումն այդ դեկրետի՝ ներքին գործերի և արդարադատության ժողկոմատներն ընդունեցին համատեղ հրահանգ, որով սահմանվեց խուզարկության, առգրավման, ինչպես նաև կասկածյալին ձերբակալելու կարգը և հիմքերը:

Իրավական այս փոփոխությունների ենթատեքստում թաքնված էր հազարավոր մարդկանց նկատմամբ իրականացված ապօրինություններն ու կամայականությունները: Ըստ Հ. Քաջազնունու «Փետրվարյան ապստամբությունը - բոլշևիկների գործն էր ամբողջովին, բնական հետևանք նրանց բռնությունների ու մանավանդ բռնագրավումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսության վերջին մնացորդները, զրկում էին սովահար մարդկանց վերջի կտոր հացից»<sup>1</sup>: Այս հանգամանքը չէր թաքցնում նաև խորհրդային պատմագրությունը, իր զարգացման սկզբնական շրջանում: «Հեղկոմը».- գրում է բոլշևիկ պատմաբան Բորյանը,- ձեռնարկեց անխնա և վճռական բռնագրավումների, առանց խտրության և առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու գյուղացիության ընդհանուր տնտեսական դրությունը և նրա հոգեբանական վիճակը: Բռնագրավումը տեղի էր ունենում անկազմակերպ ձևով, ծրագրված ու հեղափոխական-դասակարգային բնույթ չունեցող և կատարվում էր անհարկի բռնություններով: Առանց կազմակերպված ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստության և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները, հեղկոմը կարգախոս է ուղարկում՝ բռնագրավել և պետականացնել պարենը քաղաքներում մասնավոր մարդկանցից և հացի պաշարը գյուղացիներից:



Անկարգ կերպով գրավվում ու պետականացվում էր ամեն ինչ՝ զինվորական հագուստներ, արհեստավորների գործիքներ, մասնավոր և ամեն տեսակ բրնձի աղորիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղվի փեթակներ, սպիտակեղեն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը և այլն...: Բնական է, որ այս բռնի միջոցները եղան երկրի ապստամբության հիմնական պատճառները»<sup>2</sup>:

Խորհրդային կարգերի վերականգնումից հետո թվում էր, թե հայ մեծամասնականները կփորձեն վարել ինքնուրույն ներքին քաղաքականություն, այդ թվում նաև իրավական ոլորտում՝ ելնելով Հայաստանի առանձնահատկություններից: Սակայն պետական մեխանիզմը և քաղաքականությունը կուրորեն հետևում էր կենտրոնից՝ Մոսկվայից եկող հրահանգներին: Իսկ դրանցում ոչ մի տեղ չկար ժողովրդավարության և մարդու իրավունքների համար: Փետրվարյան խռովության հետևանքը ռեպրեսիաների, անհիմն ու ապօրինի բռնագրավումների որոշակի զսպումն էր, որը սակայն հետագայում նոր թափ էր առնելու «սոցիալիզմի ամբողջ ճակատով հարձակվելու» քաղաքականության և «սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց դասակարգային պայքարի սրման» տեսական դրույթի հիմնավորման հետևանքով:

Այս ամենով հանդերձ Փետրվարյան ապստամբությունը նպաստեց դատական և իրավական համակարգի օրենսդրական հիմքերի ամրապնդմանը: Հայաստանի ՍԽՀ դատարանների կազմավորման հաջորդ քայլը ժողկոմխորհի կողմից 1921 թ. հուլիսի 13-ին «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական դատարանների կանոնադրության» ընդունումն էր<sup>3</sup>: Կանոնադրության մեջ ամրագրված էին դատական քննության որոշ սկզբունքներ (իրապարակայնություն, բանավորություն, անմիջականություն), գործերի ընդդատությունը, դատավճիռների գանգատարկման և վերանայման կարգը և այլն: Ժողովրդական դատարանի դատավճիռները երկու շաբաթվա ընթացքում կարող էին գանգատարկվել շահագրգիռ անձանց կողմից: Այդ իրավունքն ունեին նաև տեղական հեղկոմները՝ խորհրդային իշխանության տեղական մարմինները:

<sup>1</sup> Յ. Քաջագունի, Դաշնակցությունը անելիք չունի, էջ 55-56:

<sup>2</sup> Տե՛ս Բ. Բորյան, Հայաստան, Դիվանագիտություն և Խորհրդային միություն, Բ հատոր, էջ 126 /հղումն ըստ Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 544/:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 3-9:

Վճռաբեկ ատյան էր համարվում ժողովրդական դատավորների խորհուրդը, որն ուներ քրեական և քաղաքացիական բաժանմունքներ: Ժողովրդական դատավորների խորհուրդը կարող էր բեկանել ժողդատարանի դատավճիռը, եթե գտներ, որ դա կայացվել է էական խախտումներով կամ ճիշտ չեն կիրառվել գործող դեկրետները: Վճռաբեկության հիմքեր էին նաև դատավարական նորմերի խախտումները, նախաքննության թերությունները, դատավճռի բացահայտ անարդար բնույթը: Վճռաբեկ ատյանը կաշկանդված չէր գանգատում մատնանշված հանգամանքներով: Վերացնելով դատավճիռը՝ վճռաբեկ ատյանը գործն ուղարկում էր ժողդատարան՝ նորից լսելու համար: Վճռաբեկ ատյանի ցուցումները պարտադիր էին ժողդատարանի համար:

1921 թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանի ՍԽՅ ժողկոմխորից և արդժողկոմատն ընդունեցին «Գերագույն դատական հսկողության ժամանակավոր կանոնադրությունը», որով ՌԽՖՍՀ-ի օրինակով Հայաստանում հիմնադրվեց հսկողության կարգով դատավճիռների և որոշումների վերանայման նոր ինստիտուտ<sup>1</sup>: Այդ ինստիտուտը, որ բնորոշ էր միայն խորհրդային արդարադատությանը, արդժողկոմատին իրավունք էր վերապահում հսկողություն իրականացնել հանրապետության դատական մարմինների գործունեության նկատմամբ՝ պարզաբանումներ և ցուցումներ տալ գործող օրենսդրության առթիվ, հսկողության կարգով վերանայել օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները: Ընդ որում, այդ ակտերը վերանայվում էին կամ արդժողկոմատի նախաձեռնությամբ կամ խորհրդային իշխանության կենտրոնական մարմինների և գավառային հեղկոմների միջնորդությունների հիման վրա<sup>2</sup>: Այդ գործառույթի իրականացման համար արդժողկոմատի կենտրոնական ապարատում հիմնադրվում էր բարձրագույն դատական հսկողության բաժինը: Այդպիսով, վարչական մարմինը կատարում էր դատական մարմնի գործառույթներ: Դա, փաստորեն, դատարանի վրա ազդելու ևս մեկ լծակ էր, դատարանը վարչական իշխանությունների վերահսկողության տակ պահելու միջոց:

Հայաստանի ՍԽՅ ԿԳԿ-ի 1922 թ. հուլիսի 22-ին ընդունեց «Հայաստանի ՍԽՅ դատախազության կանոնադրությունը», որով օրինականության վրա հսկողության և հանցավորության դեմ պայքարի

<sup>1</sup> Տե՛ս ՀՍԽՅ դեկրետների և որոշումների հավաքածու, 1921, թիվ 11, հոդվ. 68:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

նպատակով հիմնադրվեցին դատախազության մարմինները<sup>1</sup>: Արդ- ժողկոմատի կառուցվածքում հիմնվում էր դատախազության բաժի- նը, և արդարադատության ժողկոմիսարը միաժամանակ համարվում էր հանրապետության դատախազ: Ըստ այդ կանոնադրությունը դա- տախազության խնդիրներն էին՝ պետության անունից հսկողությունը բոլոր պետական մարմինների, տնտեսական հիմնարկությունների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց գործողությունների օրինականության նկատ- մամբ, մեղավորների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, օրենքը խախտող որոշումները բողոքարկելը, անմիջական հսկո- ղությունը հետաքննության և նախաքննության մարմինների՝ հանցա- գործությունները բացահայտելու գործունեության նկատմամբ, մե- ղադրանքի հիմնավորումը դատարանում, հսկողությունը կալանքի տակ պահելու օրինականության վրա<sup>2</sup>:

Սկսած 1922 թ. ՌԽՖՍՀ-ում հեղափոխական օրինականության դրկտորինայի ազդեցությամբ իրականացվում էր դատաիրավական բարենորոգում: Սակայն Հայաստանի ՍԽՀ-ում դեռ նկատվում էին արտակարգայնությունը և ծայրահեղ հեղափոխական նիհիլիզմի դրսևորումները: Այսպես, Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. մայիսի 19-ի որոշման ուժով ժողովրդական դատարաններին կից հիմնադր- վեցին հատուկ արտակարգ նստաշրջանները<sup>3</sup>: Ըստ այդ որոշման՝ ժողովրդական դատարանները պարտավոր էին նշանակել ամենօր- յա հատուկ արտակարգ դատական նիստեր: Այդ նիստերում նախա- գահում էր ժողովրդական դատավորը, իսկ նրա բացակայության կամ գերծանրաբեռնվածության դեպքում՝ նույն տեղամասի քննիչը: Դատական կազմում ընդգրկվում էին երկու կամ չորս՝ հերթից դուրս հրավիրված ժողովրդական ատենակալները: Այդ նիստերում լսվում էին այն քրեական գործերը, որոնցով որպես խափանման միջոց կի- րառվել էր կալանքը և որոնցով անհրաժեշտություն չկար կատարել հետաքննություն ու նախաքննություն: Արտակարգ դատական նիս- տերում գործի քննությունը պետք է տարվեր գործող դատավարա- կան նորմերին համապատասխան: Վերը նշված որոշումը դատական կազմին հնարավորություն էր տալիս տվյալ նիստում գործը լուծելու անհնարինության դեպքում դրան ընթացք տալ ըստ սովորական կարգի: Արտակարգ դատական նիստերը նպատակ ունեին արագաց-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 14, հոդվ. 94:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 12, հոդվ. 75:

նել ժողովրդական դատարանների աշխատանքները:

Արտակարգայնության մյուս դրսևորումը արտակարգ եռյակի հիմնադրումն էր՝ Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. հունվարի 19-ի որոշմամբ<sup>1</sup>: Դասալքության դեմ պայքարն ուժեղացնելու համար այդ եռյակին իրավունք տրվեց դասալիքների կամ նրանց օժանդակող անձանց գործերով նշանակել պատիժ ընդհուպ մինչև գնդակահարություն:

Իրավական նիհիլիզմի դրսևորման մյուս օրինակը կարող ենք համարել Հայաստանի ՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը: Սահմանադրության 10 հոդվ. հռչակում էր. «Բուրժուական իրավակարգը և արդարադատությունը արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ գյուղացիության դիկտատուրայի հաստատման ու պաշտպանության համար վերացվում են նախկին հակահեղափոխական կառավարությունների բոլոր օրենքները և դատարանները: Դրանց փոխարեն՝

ա) բանվորագյուղացիական իրավունքի աղբյուր է ճանաչվում խորհրդային օրենսդրությունը, սոցիալիստական իրավագիտակցությունը և հեղափոխական խիղճը,

բ) արդարադատության հիմք է ճանաչվում միասնական ժողովրդական դատարանը, որ հենվում է աշխատավոր մասսաների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչվում է արտակարգ դատավարության անհրաժեշտությունը բանվորագյուղացիական հեղափոխության բարձրագույն շահերի պաշտպանության համար»:

Սահմանադրական այս կարգախոսների իրական հետևանքը շատ ցայտուն նկարագրել է այդ իրադարձությունների ակնատես Յ. Քաջագունին. «Բնակչությունը բաժանված էր երկու անհավասար մասի, բուլշևիկներ (կամ բուլշևիկ ձևացնողներ), որոնց տրված էին բոլոր իրավունքները, և ոչ բուլշևիկներ (այսինքն՝ ահագին մեծամասնությունը), որոնց վրա դրված էին բոլոր պարտականությունները: Բռնագրավվում էր ամեն բան՝ սկսած տնից, կառքից, գրաստից, վառելիքից և վերջացրած երաժշտական գործիքով, լվացքի սապոնով, թել-ասեղով... Բավական է, որքան բուրժուաները վայելեցին կյանքի բարիքները, այժմ հերթը կարմիր բանակին է և հեղափոխական

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 2, հոդվ. 7:

պրոլետարիատինը»<sup>1</sup>:

Այսպիսով, ՀՍԽՅ-ի հռչակմամբ կենսագործելով իրավական նի-  
հիլիստական բնույթ ունեցող «հին պետական ապարատի ջարդի  
քաղաքականությունը» ամբողջովին ոչնչացվեց Առաջին Հանրապե-  
տության օրոք հիմնադրված և իր նորմատիվ հիմքերով ժողովրդա-  
վարական դատական համակարգը, և, 1920-22 թթ. ընթացքում, օգ-  
տագործելով Ռուսաստանի «սոցիալիստական դատական շինարար-  
ության փորձը», առանց որևէ տեղայնացման՝ կառուցվեց սկզբուն-  
քորեն նոր, խորհրդային դատական համակարգ, որը, լինելով պար-  
զեցված, և՛ կառուցվածքային, և՛ գործառույթային տեսանկյունից վե-  
րածվեց դասակարգային պայքարի հզոր միջոցի, դարձավ գործիք՝  
ամբողջատիրական իշխանության ձեռքին դասակարգային թշնամի-  
ներին, քաղաքական հակառակորդներին, այլախոհներին ճնշելու  
համար: Խորհրդային արդարադատությունը Հայաստանի օրինակով  
ունեւր այնպիսի բնութագրական գծեր, ինչպիսիք են՝ դատավարու-  
թյան մեջ սոցիալ-քաղաքական շարժառիթների ներմուծումը, արդար-  
ադատության դասակարգային բնույթի ճանաչումը, դատավորների  
ընտրությունն ըստ դասակարգային շահերի, նրանց փոփոխելիութ-  
յունը, դատական պրոֆեսիոնալիզմի դերի նվազեցումը, դատական  
և իշխանակառավարչական գործունեության տեսակների մերձեցու-  
մը, արտակարգ արդարադատության անհրաժեշտության սահմա-  
նադրական ճանաչումը, դատավարական ձևի դերի և նշանակության  
նվաստացումը, սոցիալիստական իրավագիտակցությունը և հեղա-  
փոխական խիղճը իրավունքի աղբյուր ճանաչելը, քրեական իրա-  
վունքում անալոգիայի ինստիտուտի օրինկանանացումը: Սոցիալա-  
կան կարգավորման համակարգի այս միտումների իրական հասար-  
ակական հետևանքները հազարավոր մարդկանց անհիմն ու կամա-  
յական կերպով ռեպրեսիաների ենթարկումն էր, հայ սպաների, քա-  
ղաքական պետական գործիչների, մտավորականության որոշ խա-  
վերի զանգվածային բանտարկություններն ու աքսորը, Հայաստա-  
նից արտաքսումը, ինչպես նաև նրանց հարկադրված արտագաղթը:

---

<sup>1</sup> Հղումն ըստ Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաս-  
տան, 1993, էջ 546:

**Gagik Ghazinyan**

**Dean of the YSU Faculty of Law, Doctor of Legal Sciences, Professor,  
Corresponding Member of the National Academy of Sciences of the RA**

**ESTABLISHMENT OF THE DICTATORSHIP OF PROLETARIAT IN  
ARMENIA AND NIHILISTIC LEGAL POLICY OF “DEMOLITION” OF  
THE JUDICIAL SYSTEM  
(1920 - 1922)**

Thus, the entire judicial system developed during the First Republic of Armenia was destroyed by declaring the ASSR, and during 1920-1922 a principally new, soviet judicial system was created taking into account the practice of judicial construction of the RSFSR, which was made a remedy for the class struggle, was used as a tool for the total power in order to suppress the class enemies, political opponents, dissidents, being simplified in structural and functional point of view. In the Armenian example the Soviet Justice had such characteristics, as the import of socio-political motivation in the litigation, the recognition of the class nature of justice, the selection of judges based on the class interests, their convertibility, the decrease of judicial professionalism, the appliance of judicial and power-administrative activity, the recognition of the necessity for emergency justice, the recognition of socialistic law understanding and revolutionary conscience as a source of law, the derogation of the role and importance of the procedural form.